



«Նոր ժամանակի կրթու թյ ու ն» ՀԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

Հետազոտության թեման՝ «Սովորողների քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում»

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Է. Սիրականյան

Ուսումնական հաստատություն՝ Գավառի Պապին Ղանդիլյանի անվան N2 միջն. դպրոց

Երևան 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերախմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով:

Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում:

Սա բավականին սխալ պատկերացում է: Կրտսեր դպրոցի երեխաները ևս պատրաստակամորեն են մասնակցում բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ:

Չէ՞ որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը:

Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները:

Քննադատական մտածողությունը ուսուցման համակարգում նոր մոտեցում է, որը վերջին տարիներին լայն տարածում է գտել: Այս մոտեցումը միաժամանակ հին պատմական արմատներ ունի:

Հայտնի են Սոկրատեսի առաջարկած հարցադրումների մեթոդը, Պլուտարքոսի և Մ. Ֆ. Քվինթիլիանոսի զարգացրած մոտեցումն, ըստ որի՝ Աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել:

Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը:

Քննադատական մտածողության զարգացման մեջ մեծ ավանդ ունեն ամերիկյան մանկավարժներ Ջինի Լ. Սթիլը, Քուրթիս Մ. Մերեդիթը, Չարլզ Թեմփլը և այլոք:

Քննադատական մտածողություն էզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է քննադատել բառին: Սակայն այս բառը ներառում է քննել և դատել բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ

Քննադատական մտածողության անհրաժեշտությունը դպրոցում

Այսօր Հայաստանի կրթական բարեփոխումներով շահագրգիռ մանկավարժները լուրջ որոնումների մեջ են: Դրանք հիմնականում նպատակաուղղված են դասավանդման արդյունավետությունը բարձրացնող նոր մեթոդների, հնարների, եղանակների հայտնագործմանը և գործնականում կիրառելու խնդիրներին:

Համաշխարհային մանկավարժության մեջ արդեն կան որոշակի նվաճումներ, որոնք հասանելի են նաև հայ ուսուցչին և հաջողությամբ կարող են գործադրվել մեզանում:

Նման նորարարական մեթոդների և գործելակերպի մի համակարգ է Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով /ՔՄԶԿԳՄ/ ծրագիրը:

Այս ծրագրի նպատակն է՝ կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ՝ այսինքն՝ գործունյա, քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի գործու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ և վստահաբար ստանձնել որոշումներ կայացնելու պատասխանատվությունը:

ՔՄԶԿԳՄ ծրագրի համակարգն իրենից ներկայացնում է ուսուցման գործընթացի երեք փուլերից բաղկացած մի մոդել: Դա մտածողության ընթացք՝, ուր աշակերտները ներգրավված են դեռևս նյութը սովորելուց առաջ / **խթանում** /, նյութը սովորելու ընթացքում / **իմաստի ընկալում** /, նյութը սովորելուց հետո / **կշռադատում** /:

Համակարգը կարճ անվանում են **ԽԻԿ**: Այն մեզ որոշ չափով հիշեցնում է ավանդական դասի կառուցվածքը / նախապատրաստական զրույց, նոր դասի հաղորդում, ամփոփում /:

ԽԻԿ/ խթանում, իմաստի ընկալում, կշռադատում/ համակարգի փուլերը.

1. **ԽԻԿ** համակարգի առաջին փուլը խթանումն է: Այս փուլի նպատակն է՝ խթանել աշակերտների հետաքրքրությունը և ցանկությունը՝ նոր նյութը հետազոտելու ոլորտում, դրդում է աշխույժ հետաքրքրությամբ վերհիշել ուսուցանվող թեմայի շուրջ իրենց ունեցած ամբողջ տեղեկատվությունը: Սկսում են խորհել բուն թեմայի մասին, հարցեր տալիս դրա վերաբերյալ:

Այս կերպ աշակերտները կարողանում են լայն ու կայուն հիմք պատրաստել՝ նոր տեղեկատվությունն ընդունելու և այն հիմնավորապես յուրացնելու համար:

Ի տարբերություն ավանդականի՝ այստեղ ամենագործուն դերը աշակերտինն է՝, իսկ ուսուցիչն ուղղորդողի դերում է:

Բերենք խթանման փուլի մեկ օրինակ / Սասունցի Դավթի կոնիվը/:

Մինչ նոր դասանյութին ծանոթանալը, ուսուցիչն առաջարկում է երեխաներին՝ մտքերի տարափով թվարկել այն ամենը, ինչ գիտեն կամ կարծում են, թե գիտեն Սասունցի Դավթի մասին՝ առանց մտահոգվելու դրանց ճիշտ կամ սխալ լինելու իրողությամբ: Այստեղ կարևորը Սասունցի Դավթի մասին նրանց ամբողջ իմացածը վեր հանելն է:

Դրանք գրվում են գրատախտակին, ապա յուրաքանչյուր գրվածի շուրջ տարվում է քննարկում և մտքերի փոխանակում: Այս ընթացքում ի հայտ են գալիս նաև եղած անհամաձայնությունները:

Ուսուցիչն երբեմն-երբեմն հարցեր է տալիս, թե՝ արդյո՞ք բոլորն են համաձայն առաջարկված մտքին և եթե այո կամ ոչ՝ ինչու: Յուրաքանչյուր պատասխանից առաջ ուսուցիչն աշակերտին մտածելու ժամանակ է տրամադրում, պատասխանելիս խրախուսում արտահայտած ինքնուրույն կարծիքները:

Ստրերի տարափ մեթոդի նպատակն է խթանել աշակերտների հետաքրքրասիրությունը նոր նյութի նկատմամբ, վեր հանել թեմայի վերաբերյալ իրենց ունեցած տեղեկությունները: Արտահայտված տարբեր կարծիքներն ու գիտելիքները նպաստավոր պայմաններ են ստեղծում աշակերտների հետաքրքրասիրությունն ու ուշադրությունը կենտրոնացած պահելու համար:

Կարող են առաջանալ նորանոր հարցեր, որոնք նույնպես կլիթանեն աշակերտների հետաքրքրությունները նոր նյութի նկատմամբ: Այս փուլում էական գործոն է այն, որ ուսուցիչը հնարավորինս քիչ է խոսում՝ ասպարեզը տրամադրելով աշակերտներին:

Երկրորդ փուլը կոչվում է իմաստի ընկալման փուլ: Այս փուլում սովորողները հաղորդակցվում են նոր տեղեկատվության և նոր գաղափարների:

Ամենակարևորն այստեղ խթանման փուլում ձեռք բերված աշակերտների ներգրավման աստիճանի և հետաքրքրության պահպանման կարողությունն է: Բացի այդ՝ աշակերտները վերահսկում են իրենց ընկալումը, փորձում նոր ստացված տեղեկատվությունը հարմարեցնել իրենց մտքում արդեն առկա իմացություններին:

Կան մեթոդներ, որոնց օգնությամբ կարելի է աշակերտների հետաքրքրասիրությունը կայուն պահել: Օրինակ Սասունցի Դավթի կռիվը տեքստի վրա աշխատելիս կարելի է օգտագործել փոխգործուն գրառումների համակարգ՝ արդյունավետ ընթերցանության և մտածողության համար մեթոդը:

Տեքստը լուր ընթերցելիս աշակերտը մատիտով նշումներ է կատարում այն հատվածների կողքին, որոնց մասին գիտի / + նշանով / և այն հատվածների կողքին, որոնց մասին չգիտի / - նշանով /:

Եթե երեխաները դժվարանում են կարդալ, ուսուցիչն ինքն է կարդում, իսկ աշակերտներն ուշադիր հետևելով տեքստին՝ նշումներ են կատարում:

Ավանդական ուսուցման ժամանակ այս փուլում նոր դասը միայն ընթերցվում է կա՛մ ուսուցչի, կա՛մ աշակերտի կողմից՝ առանց տեքստի վրա որևէ աշխատանք կատարելու: Արդյունքում՝ աշակերտը քիչ բան է հիշում կարդացածից:

3.ԽԻՎ համակարգի վերջին փուլը կշռադաստման փուլն է:

Այս փուլի նպատակն է՝ աշակերտների միջև ծավալել քննարկում, որի ընթացքում միմյանց հետ հաղորդակցմամբ, նրանք ծանոթանում են տարբեր գիտելիքների, պատկերացումների, մտածում դրանց շուրջ, հարցեր տալիս, մեկնաբանում, բանավիճում, հակադրվում: Արդյունքում՝ կառուցվում է սեփական իմացական դաշտը: Այս փուլում աշակերտն իսկապես յուրացնում, սեփականացնում է նոր գիտելիքը, ընկալվածն արտահայտում է սեփական բառերով ու ձևակերպումներով:

Սասունցի Դավթի կռիվը տեքստը կարդալուց և նշումներ կատարելուց հետո աշակերտները ներկայացնում են իրենց գրառումները: Ապա դրանց շուրջ քննարկում է կազմակերպվում՝ ուսուցչի ուղղորդող հարցերի օգնությամբ:

Անդրադառնալով խթանման փուլում մտքերի տարափի ժամանակ գրատախտակի գրառումներին՝ ողջ դասարանով համեմատում և քննարկում են այն կետերը, որոնց վերաբերյալ համաձայնություն կամ տարաձայնություններ են ի հայտ եկել:

Պարզաբանվում է, թե տեքստը կարդալուց հետո փարատվեցի՞ն արդյոք նրանց կասկածները:

Վերջում աշակերտներին հանձնարարվում է նկարել տեքստին վերաբերող որևէ կերպար կամ տեսարան և ցույց տալ միմյանց:

Այս աշխատանքի նպատակն է՝ օգնել աշակերտին ամփոփել ուսումնասիրվող թեմայի շուրջ իր ունեցած պատկերացումները:

Ուսուցչի մասնագիտական-մանկավարժական մակարդակն արդեն համարժեք արձագանք է գտնում աշակերտների վերաբերմունքի մեջ, երբ սովորողներն իրենք արդեն ուսուցման ընթացքում դրսևորվում են որպես հավասարագոր որոնողներ ու կշռադասողներ:

Ուսուցման այս եղանակների ներդրումը նպատակ ունի ապահովելու աշակերտների աշխարհընկալման ինքնուրույնությունը, զարգացնելու նրանց տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական երևակայությունը:

Դասի տարբեր փուլերում կիրառվող մեթոդներ

Խթանման Փուլ


Խթանման փուլի գլխավոր նպատակն է օգնել աշակերտներին՝ ի մի բերել դասանյութի վերաբերյալ իրենց նախնական գիտելիքները, շարժել նրանց հետաքրքրությունը և նորը սովորելու դրդապատճառներ, շարժառիթներ ստեղծել: Բազմազան են խթանման փուլում օգտագործվող վարժությունները, որոնցից ուսուցիչն ընտրություն կատարելու մեծ հնարավորություն ունի: Արդյունավետ խթանման վարժությունները կնպաստեն ակտիվ ուսումնառությանը: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Խմբավորում

Սա գրավոր վարժություն է, որը սիրով կատարում են գրեթե բոլոր աշակերտները: Այն հնարավորություն է տալիս պատկերացում կազմել տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտների իմացության, ընկալումների և պատկերացումների մասին: Աշակերտները, կատարելով այն, հնարավորություն են ունենում տեղեկանալ իրենց ունեցած գիտելիքների և դրանց միջև գոյություն ունեցող կապերի մասին: Խմբավորումը ներկայացնելիս նախ անհրաժեշտ է նկարագրել դրա քայլերը՝

- Գրել թեմայի հետ առնչվող որևէ առանցքային բառ գրատախտակի կամ թղթի կենտրոնում:
- Մտազրոհի միջոցով գրառել այդ բառին առնչվող բառերն ու արտահայտությունները:
- Գաղափարների գրառելը ավարտելուց հետո գծիկներով միացնել այն բառերը, որոնք իրար հետ առնչվում են:
- Հնարավորին չափ շատ մտքեր գրել՝ մինչ դրանք կամ տրված ժամանակը կսպառվի:

Առաջին անգամ այս վարժությունը ներկայացնելիս անհրաժեշտ է ընտրել այնպիսի թեմա, որ խմբի բոլոր անդամների համար հոգեհարազատ լինի: Այն մեկ անգամ խմբով կատարելուց հետո աշակերտներն այնքան են հմտանում, որ կարողանում են կատարել ինչպես փոքր խմբերով, այնպես էլ՝ անհատապես:



Մտազրոհ կամ մտքերի տարափ

Մտազրոհը խմբի անդամների միջև մտքերի փոխանակման ընթացքում գաղափարների ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է: Մինչ դասանյութին անցնելը, ուսուցիչը որոշակի ժամանակում անհատապես կամ զույգերով կազմել է տալիս իրենց իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ: Այնուհետև բոլոր մտքերը, գաղափարները գրի են առնվում գրատախտակին: Ամեն միտք՝ թեկուզ անվստահ և վախվորված, խրախուսվում է: Այս մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ բացառվում է առաջադրված լուծումների մասին անել որևէ քննադատություն կամ տալ գնահատական: Յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում, չի վախենում սխալվելուց, անհավանական, անհեթեթ և հակասական գաղափարներ արտահայտելու մտավախություն չի ունենում: Այդպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Մտքերը, գաղափարները գրատախտակին գրի առնելուց հետո ընթերցում են նոր նյութը, ապա ամբողջ խմբով քննարկում են առաջադրված գաղափարները անհրաժեշտության դեպքում լրացնում, եղած անհամաձայնությունները քննարկում, շտկում:

Այս մեթոդի հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն է, նոր գաղափարներ «հայտնա- բերելը»:

Ճիշտ են հետևյալ ասույթները.

՛ՏՉկա ավելի վտանգավոր բան, քան միտքը, եթե այն միակն է».

ՏԼավ մտահղացումներ ունենալու լավագույն ձևը շատ մտահղացումներ ունենալն է»:

Նախնական կազնակերպիչ

Ուսուցիչը ներկայացնում են թեմային առնչվող փաստեր ու հասկացություններ և դրանց նկատմամբ շարժում աշակերտների հետաքրքրությունը: Օրինակ մինչև Հ. Թումանյանի «Գիքոր» պատմվածքին անցնելը ուսուցիչը կարող է հարցնել, թե ի՞նչ գիտեն Հ. Թումանյանի մասին և նրա մանկական ո՞ր ստեղծագործություններին են ծանոթ:

Կենտրոնացնող հարցեր

Կան այնպիսի հարցեր, որոնց պատասխանները թաքնված են նոր ներկայացվելիք նյութի մեջ: Օրինակ՝ մաթեմատիկայի դասին (3-րդ դաս.) մինչև ՏՈւղղանկյան մակերեսը» դասանյութին անցնելը կարելի է աշակերտներին հարցնել, թե ինչ են կարծում՝ ինչպես կարելի է հաշվել ուղղանկյան մակերեսը և առաջարկել, որ պարզաբանեն, թե ինչու: Նրանց պատասխանները լսելուց հետո ընթերցել տալ դասանյութը:

Ուղղորդված ընթերցանություն

Տեքստը բաժանել հատվածների և յուրաքանչյուր հատվածից առաջ հարցնել աշակերտներին, թե նրանց կարծիքով ի՞նչ է կատարվելու այս հատվածում, կամ ի՞նչ ինֆորմացիա են նրանք ակնկալում ստանալ:

Ազատ շարադրանք

Մինչ նոր նյութին անցնելը աշակերտներին խնդրել ազատ շարադրել, թե ինչ գիտեն կամ կուզենային իմանալ տվյալ նյութի մասին:

Խառնված հերթականություններ

Դասանյութը բաժանել մի քանի տրամաբանական հատվածների, դրանք գրել առանձին թղթերի վրա, խառնել և դնել գրատախտակի ներքևում: Դասարանին առաջարկել

որոշել իրենց կարծիքով ճիշտ հերթականությունը: Երբ աշակերտները համաձայնության են գալիս իրադարձությունների հերթականության շուրջ, ուսուցիչը հանձնարարում է ընթերցել տեքստը ու տեսնել, թե արդյոք իրենց դասավորությունը համապատասխան՞ում է տեքստին:

Ստանալ թիրախ թիվը

Դասարանը բաժանել 4-5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի տալ 0-9 թվերով քարտերի մի կապուկ, որոնք դրվում են սեղանին շրջված վիճակում:

1. Խմբի անդամներից մեկը (առանց նայելու) ընտրում է չորս քարտ, երեքը դնում է միասին, մեկը՝ առանձին:

Օրինակ՝ 4 2 1 և 3

3-ը թիրախ թիվն է:

2. Բոլոր խմբերի համար առաջադրանքը (յուրաքանչյուր խումբ ունի թվերի իր տարբերակը) հետևյալն է. այդ երեք թվերից յուրաքանչյուրը միայն մեկ անգամ օգտագործելով մաթեմատիկական գործողությունների մեջ՝ ստանալ թիրախ թիվը:

3. Թիրախ թիվը ստանալու համար խմբերը կարող են օգտագործել գումարման, հանման, բազմապատկման և բաժանման գործողություններ:

Ցանկալի է, որ թիրախ թիվը որոնելիս խմբերը կարողանան գտնել լուծման մի քանի տարբերակ:

Ահա բերված օրինակի լուծումները.

$$4:2+1=3 \qquad 4-2+1=3$$

Կարելի է առաջարկել մեկ այլ տարբերակ:

Խմբերին տալ 1 - 6 և 20,30,40, 50,60 թվերով քարտեր: 1-6 թվերի քարտերը տուփի մեջ են: Խմբի անդամներից մեկը տուփից մի քարտ է վերցնում: Վերցրած թիվը գրի է առնվում, իսկ քարտը նորից դրվում է տուփի մեջ (որպեսզի այն նորից հնարավոր լինի հանել): Տուփի քարտերը (1-6) խառնում են և շարունակում թվեր հանել մինչև հինգ հատ թիվ դուրս գա: Այնուհետև 20, 30, 40, 50, 60 թվերից հանվում է մի թիվ՝ որպես թիրախ թիվ:

Խմբերին առաջարկվում է յուրաքանչյուր թիվն օգտագործել միայն մեկ անգամ (բոլոր թվերն անպայման պետք է օգտագործվեն)՝ մաթեմատիկական որոշակի գործողությունների

արդյունքում թիրախ թիվը ստանալու համար: Խրախուսվում է բազմաթիվ տարբերակների կազմումը:

Օրինակ՝

թվակիր քարտեր թիրախ թիվ

5 4 3 6 2 20

Ահա լուծման երկու տարբերակ.

$$(5-4)*3*6+2=20 \quad (5+4):3*6+2=20$$

Այս վարժության ժամանակ յուրաքանչյուր խումբ կարող է ունենալ թվերի իր կապուկը կամ բոլոր խմբերի համար կարող է հանվել մեկ կապուկ:

Ո՞րն է թիվը

Այս առաջադրանքը կարող է կատարվել փոքր խմբերով կամ զույգերով: Մասնակիցները բաժանվում են զույգերի կամ 4-5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբից կամ զույգերից մեկը ընտրում է մի թիվ ու մի շարք հուշող բանալիների միջոցով օգնում ընկերներին կռահել մտապահած թիվը:

Օրինակ՝ «Ես մտքումս մի թիվ եմ պահել»

I բանալի Այն ամբողջ թիվ է:

II բանալի Այն բաժանվում է 6-ի:

III բանալի Այն գտնվում է 30-ի և 40-ի միջև:

IV բանալի Նրա նիշերի գումարը 9 է:

V բանալի Տասնավորը միավորի կեսն է:

VI բանալի Թիվը բաժանվում է 9-ի և 4-ի վրա

Այս օրինակի թիրախ թիվը 36-ն է:

Կանխատեսումներ՝ զույգերով

Նոր դասի նյութից (մինչ այն ներկայացնելը) ընտրել 5-6 բառ, գրել գրատախտակին, աշակերտներին խնդրել ուշադիր կարդալ այդ բառերը: Ասել, որ դրանք վերցված են դասի

նյութից, խնդրել, որ իրենց գույզի հետ կանխատեսումներ անեն, թե դասի թեման ինչի մասին կարող է լինել, և այդ բառերն ինչպես կարող են օգտագործված լինել դասում: 5 բույս կարելի է տրամադրել քննարկումների և գրառումների համար: Իրենց գրառումներին նրանք պետք է անդրադառնան դասը ընթերցելուց հետո միայն և ասեն՝ արդյոք իրենք ճիշտ էին կանխագուշակել, թե՞ ոչ:

2.2. Իմաստի ընկալման Փուլ

Այս փուլում աշակերտը հաղորդակցվում է նոր նյութին: Այդ հաղորդակցումը կարող է կատարվել դասանյութը ընթերցելու, կինոնկար դիտելու, բանավոր խոսք լսելու և այլ եղանակներով: Այս փուլի ընթացքում ամենակարևորը ներգրավման աստիճանը, հետաքրքրությունը և եռանդը պահպանել կարողանալն է, որը ձեռք է բերվել խթանման փուլի ընթացքում: Հաջորդ կարևոր խնդիրն է օգնել սովորողներին վերահսկելու սեփական ընկալումը և իրենց նախնական իմացածի ու նոր գիտելիքների միջև կամուրջ կառուցել:

Ուսուցիչը պետք է հստակ իմանա, թե ինչպե՞ս պետք է հետազոտվի նյութի բովանդակությունը, աշակերտները ի՞նչ պետք է անեն դասի ընթացքում նյութը խորությամբ ընկալելու համար: Այս փուլի համար ևս կան բազմաթիվ մեթոդներ, որոնցից ըստ նպատակահարմարության կարող է օգտվել ուսուցիչը:

Փոխգործուն գրառումների համակարգ՝ արդյունավետ կարդալու և մտածելու համար

Այս մեթոդի օգնությամբ կարելի է մեծացնել աշակերտների հետաքրքրությունը և վերահսկել ընկալման ընթացքը: Դասարանում գործածվող նշանների թիվը կախված է աշակերտների տարիքից: Տարրական դասարաններում գերադասելի է օգտագործել երկուսից ոչ ավելի նշան՝ «+»՝ «Ես սա գիտեմ» և «-»՝ «Ես սա չգիտեմ»: Այս մեթոդը կարդալու ընթացքում օգնում է աշակերտին վերահսկել սեփական ընկալումը:

Դասի նյութի վերաբերյալ իրենց նախնական գիտելիքները մտազրոհի ենթարկելուց հետո աշակերտները տեքստում վերը նշված նշաններով նշում են այն հատվածները, որոնք հաստատում են իրենց նախնական գիտելիքները («+»), և այն հատվածները, որոնք պարունակում են նոր ինֆորմացիա, որն իրենք չգիտեին («-»): Ապա, տեքստի բովանդակությանը ծանոթանալուց հետո զրուցում են կողքի ընկերոջ հետ, քննարկում այն հատվածները, որոնք հաստատում են իրենց իմացածը և այն հատվածները, որոնցից իրենք

ստացել են նոր տեղեկություններ: Ցանկալի է, որ դասանյութը ընթերցելուց հետո յուրաքանչյուր աշակերտ կազմի իր անհատական աղյուսակը: Դա արվում է հետևյալ կերպ.

+	-

Առաջին սյունակում գրում է այն, ինչ ինքը գիտեր, իսկ 2-րդ սյունակում՝ ինչ նոր է իմացել:

Երկակի գրառման օրագիր

Աշակերտներին առաջարկվում է տետրի էջը բաժանել երկու հավասար մասի (երկայնքով): Դասը ընթերցելուց հետո էջի մի մասում նշել այն հատվածը, որը իրենց կարծիքով ամենակարևորն է, իսկ մյուս մասում մեկնաբանել, թե ինչու է այդ հատվածը կարևորում, ինչու է այն գրավելիքենց ուշադրությունը, ինչի մասին է այն իրենց մտածել տալիս: Դրանից հետո աշակերտներն ընթերցում են իրենց դուր եկած հատվածները և արած մեկնաբանությունները: Ընթերցման ժամանակ պարզել թե էլ ով է ընտրել ընթերցվող հատվածը և ինչպես է մեկնաբանել ընտրությունը:

Վերջում ցանկալի է, որ ուսուցիչը ևս, որպես մասնակից, կարդա իր գրառումները:

Հարցադրումներ

Տեքստը բաժանվում է հատվածների: Դասարանը բաժանվում է մի քանի հոգուց կազմված թիմերի: Տեքստի յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո թիմերը դադար են առնում և հերթով միմյանց հարցեր տալիս կարդացածի մասին: Ցանկալի է, որ ուսուցիչը ևս մասնակցի այս վարժության կատարմանը, լինի որևէ թիմի անդամ: Նա աշակերտներին կողողի մի քանի դիպուկ հարց, որոնք աշակերտներին մտածելու տեղիք կտան, կտանեն տեքստի խորքերը: Այն կօգնի, որպեսզի աշակերտները խուսափեն պարզունակ, վերարտադրողական հարցերից և մտածեն, թե ինչ կարգի հարցեր է անհրաժեշտ առաջադրել:

Այս վարժությունը կարելի է օգտագործել նաև ամբողջ դասարանի հետ աշխատելիս: Աշակերտները տեքստից ընթերցում են մի հատված, ապա դադարեցնում այն, փակում գրքերը և ուսուցչին ուղղում իրենց հարցերը: Դրանից հետո նրանք ընթերցում են հաջորդ հատվածը: Այս անգամ դերերը փոխվում են: Ուսուցիչը հանդես է գալիս հարցեր տվողի

դերում, իսկ աշակերտները՝ պատասխանողի: Նման մի հարցափոխանակությունից հետո կարելի է փոխել վարժության բնույթը՝ առաջարկել կանխագուշակել նյութի շարունակությունը և հիմնավորել

Փոխադարձ ուսուցում

Բոլորին հայտնի է, որ սովորեցնելը սովորելու լավագույն եղանակն է:

Տեքստի մի հատված փոքր խմբով ընթերցելուց հետո աշակերտները հերթով պետք է ստանան «ուսուցիչ» դերը և կարդացածն ամփոփելու համար հարցեր տան իրենց ընկերներին, պարզաբանեն անհասկանալի մասերը և մինչև այդ դերը հաջորդ աշակերտին հանձնելը փորձեն կանխատեսել, թե ինչի մասին է տեքստի հաջորդ հատվածը, ապա բոլորին հանձնարարեն կարդալ հաջորդ հատվածը:

Որպեսզի աշխատանքն արդյունավետ լինի, առաջին հատվածի քննարկումը կատարում է ուսուցիչը: Աշակերտները ոչ միայն պետք է ուշադրություն դարձնեն հատվածին ու մասնակցեն քննարկմանը, այլ նաև հետևեն, թե ինչպես է ուսուցիչը վարում դասը, որովհետև հաջորդ հատվածների ընթերցման ժամանակ նրանցից յուրաքանչյուրը հերթով ստանանելու է ուսուցչի դերը:

Գրատախտակին կախված աղյուսակում նշված են այն քայլերը, որոնք պետք է կատարվեն յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո.

1. Ամփոփել ընթերցված հատվածը:
2. Կարդացած հատվածի վերաբերյալ 1-2 հարց տալ և աշակերտներից ստանալ դրանց պատասխանները:
3. Պարզաբանել այն հարցերը, որոնք աշակերտների համար պարզ չեն:
4. Կանխագուշակել, թե ինչի մասին է տեքստի հաջորդ հատվածը:
5. Բոլորին հանձնարարել կարդալ տեքստի հաջորդ հատվածը:

Այնուհետև ուսուցիչը աշակերտներին ծանոթացնում է աղյուսակին, որպեսզի օգնի նրանց հետևել թե ինչպես է ինքը վարում քննարկումը: Քննարկման յուրաքանչյուր փուլ անցկացնելիս նա առաջարկում է աշակերտներին հետևել աղյուսակին և վերոհիշյալ կետերին, երբ իրենք կվարեն քննարկումը՝ հանդես գալով ուսուցչի դերում:

Համագործակցային ուսումնառության խմբեր

Այս խմբերը կարող են քննարկման համար հարցեր ընտրել և պատասխանել դրանց կամ վերցնել որևէ խնդիր և լուծել այն: Խմբի յուրաքանչյուր անդամ կարող է խմբային աշխատանքում ունենալ որևէ դեր՝ գրանցող, զեկուցող, ստուգող, ամփոփող, ընթերցող և այլն: Յուրաքանչյուր խմբում անհրաժեշտ է պարտականությունների հստակ բաշխում կատարել: Դերերի կարևորության վրա առանձին ուշադրություն հրավիրելը աշակերտներին մղում է ավելի լուրջ վերաբերվել և իսկապես կատարել դրանք: Սակայն վարժությունից վարժություն այս դերերը պետք է վերաբաշխվեն, քանի որ այստեղ նպատակը նշված հմտությունների հավասար զարգացումն է բոլորի մոտ: Կարելի է մտածել նաև նոր դերերի մասին: Համագործակցային խմբերում աշակերտներն իրենք են միմյանց սովորեցնում նյութի այս կամ այն հատվածը: Յուրաքանչյուրը պատասխանատու է մյուսների կողմից նյութը յուրացնելու համար: Այս խմբերում միավորներ կարելի է տալ անգամ ընկերներին լավ սովորեցնելու համար:

Հետազոտության ուղենիշեր

Աշակերտներին տալ ուղենիշեր, որոնք նրանց ուշադրությունը կբևեռեն տեքստի կարևորագույն մասերի վրա և կզարգացնեն մտածողությունը:

Օրինակ՝ «Չարի վերջը» առակում գտնել այն տողերը, որոնք արտահայտում են հիմնական ասելիքը: Կամ՝ «Սասունցի Դավիթ» էպոսում գտնել այն տողերը, որտեղ երևում է Սասունցի Դավիթի հայրենասիրությունը:

2.3. Կշռադատման Փուլ

Կշռադատումը սովորելու գործընթացի այն փուլն է, երբ աշակերտները մտովի հետադարձ հայացք են գցում ու խորհում դասի ընթացքում հանդիպած գաղափարների և ընկալած նյութի շուրջ, տալիս են հարցեր, անում մեկնաբանություններ, բանավիճում, նոր սովորածը օգտագործում են որևէ կերպ:

Մի շարք առարկաներում, որոնց դասավանդումը ներառում է նաև գործողությունների ուսուցում, ինչպես օրինակ մաթեմատիկան, կարելի է կշռադատման փուլը մի փոքր ընդլայնել և հավելել նաև կիրառումը: Նոր հաղորդված նյութի նախնական ըմբռնումից հետո կարելի է այն կիրառել նոր խնդրի կամ վարժության լուծման ժամանակ:

Կշռադատման փուլի կազմակերպման համար կան բազմաթիվ ու բազմազան տարբերակներ: Ընտրությունը կախված է դասավանդվող առարկայից, աշակերտների

մակարդակից, ժամանակից, նպատակահարմարությունից: Ներկայացնենք մի շարք վարժություններ, որոնք կարելի է կազմակերպել այս փուլում:

Ընթերցողից պատասխան ակնկալող հարցեր

Եթե ընթերցվել է տեքստ, որը ենթադրում է աշակերտների սուբյեկտիվ պատասխաններ, ապա կարելի է ընդհանուր հարցեր առաջարկել.

- Ի՞նչ նկատեցիք այս տեքստում:
- Ինչի՞ մասին այն ստիպեց մտածել:
- Կամ առաջարկել ավելի մասնավոր հարցեր.
- Ո՞րն է տեքստի ամենակարևոր ասելիքը:
- Ո՞րն է տեքստի ամենակարևոր նախադասությունը:
- Ո՞րն է տեքստի ամենակարևոր բառը:

Երկակի գրառման օրագրի քննարկում

Եթե իմաստի ընկալման փուլում օգտագործվել է «Երկակի գրառման օրագիր» վարժությունը, ապա ուսուցիչը կշոռադատման փուլում աշակերտների գրառած մտքերի և մեկնաբանությունների շուրջ կարող է քննարկում ծավալել: Ապա տալ մի քանի ընդհանրացնող հարց: Օրինակ՝

- Ի՞նչ կհիշեք՝ այս նյութի հետ կապված:
- Ո՞րն է այս դասանյութի կարևոր ասելիքը:
- Նյութը ձեզ հետաքրքրե՞ց, ինչո՞ւ:

Ընդհանուր հարցման քննարկում

Աշակերտներին խնդրել մտածել և քննարկել նախօրոք պատրաստած մեկնաբանող հարցեր (մեկնաբանող հարցը հստակ, կոնկրետ հարց է, որը վերաբերում է տեքստում եղած որևէ խնդրի, և որին կարելի է տալ մի քանի պատասխան):

Վեճնի դիագրամ

Վեճնի դիագրամը կառուցվում է երկու շրջանագծերով, որոնք հատման մակերես ունեն կենտրոնում: Այդ դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց

հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով: Օրինակ՝ ուսուցիչը ցանկանում է, որ աշակերտները «Մասունցի Դավիթ» էպոսը ընթերցելուց հետո բնութագրեն Դավթին և Մելիքին և գտնեն նրանց ընդհանրությունը: Նա խնդրում է աշակերտների զույգերին գծել Վեննի դիագրամ, մի շրջանագծում բնութագրել մի հերոսին, մյուս շրջանագծում՝ երկրորդին: Հետո միանալ այլ զույգերի, համեմատել դիագրամները, այնուհետև հատվող մասում լրացնել

Հնգյակ

Հնգյակն իրենից ներկայացնում է մի բանաստեղծություն, որի ստեղծման համար անհրաժեշտ է ստացած ինֆորմացիան, գիտելիքները համադրել ու արտահայտել դիպուկ արտահայտություններով, որոնք պարունակում են թեմայի նկարագրություն կամ դրա մասին դատողություն:

Բանաստեղծությունը գրելու համար աշակերտին տրվում է հնգյակ գրելու ուղեցույցը.

Առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը (սովորաբար՝ գոյական):

Երկրորդ տողը բաղկացած է հասկացությունը նկարագրող երկու բառից, (սովորաբար՝ ածական):

Երրորդ տողը կազմված է երեք բառից, որոնք արտահայտում են հասկացության հետ կապված գործողություններ (սովորաբար՝ բայ):

Չորրորդ տողը բաղկացած է չորս բառից կազմված արտահայտությունից, որը ցույց է տալիս հասկացության նկատմամբ զգացմունք կամ վերաբերմունք:

Վերջին տողը մեկ հոմանիշ բառ է, որն այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Մինչ աշակերտները կգրեն հնգյակներ, ցանկալի է, որ ուսուցիչը ներկայացնի իր կողմից կազմված մի քանի հնգյակների օրինակներ:

Հայրենիք

Հարազատ, թանկագին,

Կանչող, ոգևորող, միավորող,

Ես սիրում եմ քեզ,

Օրբան:

ԹՎեր

Խորհրդավոր, զարմանալի,

Գումարվող, հանվող, բազմապատկվող,

Իմաստալից, ամեն ինչ հաշվող

Մեծություններ:

Դրանից հետո առաջարկել աշակերտներին որևէ թեմայի շուրջ գրել հնգյակներ, քննարկել ընկերոջ հետ և ներկայացնել նրանցից լավագույնը: Հնգյակները լավ միջոց են ստացված տեղեկատվությունը համադրելու, աշակերտի ընկալումը ստուգելու և այն ստեղծագործաբար արտահայտելու համար: Այն կշռադատման փուլի արդյունավետ միջոց է:

Խորանարդում

Խորանարդումը կշռադատման փուլում կիրառվող մեթոդներից է, որ աշակերտին մղում է պատասխանելու թեմային առնչվող վեց տարբեր հարցերի, որոնք սկսում են պարզից և աստիճանաբար բարդանում:

Այս մեթոդի համար օգտագործվում է խորանարդ երկրաչափական մարմինը: Խորանարդը կարող է պատրաստված լինի թղթից, ստվարաթղթից: Նրա կողի երկարությունը նպատակահարմար է, որ լինի 15-20 սմ: Ուսուցիչն աշակերտներին բաժանում է փոքր խմբերի, տալիս է թեմայի հետ կապված որևէ առարկա կամ հասկացություն (ցանկալի է, որ յուրաքանչյուր խմբի տրվի տարբեր առարկա կամ հասկացություն) և խորանարդ, որի 6 նիստերից յուրաքանչյուրի վրա գրված են հետևյալ առաջադրանքները:

Նկարագրիր այն (ինչ տեսնում ես՝ գույները, ձևերը չափսերը): Համեմատիր այն (ինչի՞ է նման, ինչի՞ց է տարբեր):

Ինչի՞ մասին է այն ստիպում քեզ մտածել: (Մտքումդ ի՞նչ է ծագում, դրանք կարող են նման և տարբեր բաներ փնել):

Ինչի՞ ց է այն բաղկացած (կամ պատրաստված):

Ինչպե՞ս կարող ես օգտագործել այն:

Այն լա՞վն է, թե՞ վատը:

Խմբերին առաջարկվում է ուշադիր դիտել առարկան կամ մտածել տրված հասկացության մասին և իրար հետ համագործակցելով՝ գրավոր պատասխանել խորանարդի նիստերի վրա գրված 6 առաջադրանքներին (լավ կլինի նիստերը համարակալել, որ պատասխանելիս աշակերտները հեշտից գնան դեպի բարդը): Խմբերն ազատ շարադրում են իրենց մտքերը: Գրավոր հատվածն ավարտելուց հետո իրար են ներկայացնում իրենց կատարածը: Անհրաժեշտության դեպքում մյուս խմբերի անդամները կարող են շտկումներ, լրացումներ կատարել կամ հարցեր տար գնահատել կատարածը՝ պարզաբանելով, թե ինչը դուր եկավ և ինչու: Խորանարդման մեթոդը կիրառելի է ծանոթ թեմայի դեպքում, թիրախ առարկան կամ հասկացությունը զգուշորեն պետք է ընտրել:

Այս մեթոդի կիրառումը շատ օգտակար է կշռադատման փուլում: Այն օգնում է, որ աշակերտը կարողանա առարկան, հասկացությունը դիտել տարբեր տեսանկյուններից:

Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, մտքեր փոխանակի՛ր

Այս վարժությունն արագ կատարվող համատեղ ուսումնասրության վարժություն է, որն օգնում է աշակերտներին մտածել, կշռադատել տեքստի շուրջ և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել իրենց մտքերը: Ուսուցիչը նախօրոք թեմայի շուրջ հարցեր է պատրաստում, որոնք սովորաբար բաց բնույթ ունեն (միանշանակ պատասխան չեն ենթադրում) և աշակերտներին խնդրում է կրճատ գրել այդ հարցերի պատասխանները: Այնուհետև աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում՝ փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի կարծիքները, գաղափարները: Ապա ուսուցիչն առաջարկում է զույգերից մի քանիսին ներկայացնել իրենց քննարկումների արդյունքները:

Հինգ ըոպեանոց շարադրանք

Հինգ ըոպեանոց շարադրանքն օգտագործվում է դասի վերջում, որպեսզի աշակերտներին օգնի ամփոփել ուսումնասիրվող թեմայի մասին իրենց մտքերը և

ուսուցիչներին առավել հստակ պատկերացում տա դասի մտավոր ներգործության վերաբերյալ:

Աշակերտներին առաջարկվում է գրել, թե ի՞նչ սովորեցին այս դասն ուսումնասիրելիս, ինչպես նաև առաջադրեն նյութին առնչվող մի հարց, որի պատասխանը դեռ չգիտեն:

Ուսուցիչը շարադրությունները կարող է հավաքել, ուսումնասիրել և օգտագործել հաջորդ օրվա դասը պլանավորելիս:

Անկյուններ

«Անկյունները» համագործակցային ուսումնառության վարժություն է, որի նպատակը հակասական հարցերի շուրջ բանավեճ ծավալելն է: Այն կարող է հաջորդել վիճահարույց տեքստի ընթերցմանը, ֆիլմի դիտմանը կամ աշակերտներին հետաքրքրող որևէ թեմայի: «Անկյուններ» վարժության իմաստն այն է, որ աշակերտները որևէ խնդրի վերաբերյալ ընդունեն մի դիրքորոշում և կարողանան այն պաշտպանել: Այս վարժության ընթացքում մասնակիցները պետք է ուշադիր լսեն միմյանց և դիմացինի փաստարկների համոզիչ փնտլու դեպքում փոխեն իրենց կարծիքը կամ չընդունելու դեպքում հակափաստարկներ բերեն ու պաշտպանեն իրենց տեսակետը:

Այս վարժությունը աշակերտներին խրախուսում է լսել ուրիշների մտքերը և փաստարկները և դրանք ընդունելու դեպքում փոխել եղած պատկերացումները:

Այն կազմակերպվում է հետևյալ կերպ

Քննարկվող թեմայի վերաբերյալ մտազրոհի միջոցով պարզվում են աշակերտների դիրքորոշումները:

Աշակերտներին ժամանակ է տրվում իրենց ընտրած դիրքորոշման օգտին համոզիչ փաստարկներ ձևակերպել:

Աշխատանքն ավարտելուց հետո այդ խնդրի վերաբերյալ դրական դիրքորոշում ունեցողները հավաքվում են դասասենյակի մի անկյունում, իսկ բացասական դիրքորոշում ունեցողները՝ մյուս անկյունում: Իսկ այն աշակերտները, որոնք որևէ կոնկրետ դիրքորոշում չունեն՝ երրորդ անկյունում:

Մի քանի բույսերի ընթացքում խմբերը քննարկում են իրենց գրավոր փաստարկները, որոշում իրենց դիրքորոշումն ամրապնդող ամենահամոզիչ փաստարկները, ընտրում իրենց խոսնակներին, որոնք բանավեճի ընթացքում պետք է ներկայացնեն խմբերի կարծիքները:

Բանավեճը սկսելիս յուրաքանչյուր խումբ հստակ ներկայացնում է քննարկվող հարցի մասին իր դիրքորոշումը և բերում հիմնավորող փաստարկներ:

Երբ խմբի խոսնակներն ավարտում են իրենց խմբի տեսակետները ներկայացնելը, խմբի մյուս անդամները ևս կարող են քննարկման մասնակից դառնալ: Քննարկման ընթացքում մասնակիցները, ինչպես նաև խումբը, կարող են փոխել իրենց կարծիքը: Նրանք նախկին համախոհների անկյունից պետք է տեղափոխվեն այն անկյունը, որոնց փաստարկներն ավելի համոզիչ կթվան իրենց: Խմբերը պետք է աշխատեն մտածել և իրենց տեսակետը հաստատելու համար գտնել այնպիսի նոր փաստարկներ, որ ավելի շատ կողմնակիցներ ձեռք բերեն:

Քննարկումն ավարտելուց հետո կարելի է առաջարկել խմբերից յուրաքանչյուրին հանրագումարի բերել իրենց դիրքորոշումը և այն հիմնավորող փաստարկները:

Քառաբաժան

Դասանյութի յուրացումը ստուգելու նպատակով ուսուցիչն առաջարկում է կազմել քառաբաժան՝ տետրի էջը խաչաձև բաժանելով 4 հավասար մասերի: Յուրաքանչյուր մասում ուսուցիչն առաջարկում է գրել որոշակի հարց և պատասխանել, օրինակ՝ Հ.Թումանյանի «Գիքոր» պատմվածքը կարդալուց հետո ուսուցիչը կարող է առաջարկել հետևյալ

<u>Բնութագրող</u>	<u>Զգացմունքներն Արտահայտող</u>
Բնութագրի՛ր Գրիգորին:	Ի՞նչ զգացումներ ունեցաք պատմվածքը կարդալուց հետո:
<u>Կենսավորձ</u>	<u>Իմաստավորում</u>
Պատմվածքի բովանդակությունը ի՞նչ հիշեցրեց ձեզ: Ի՞նչ համանման պատմություն եք ընթերցել:	Պատմվածքին նոր վերնագիր դրե՛ք:

քառաբաժանը.

Ու ս ու ց ի չ ը պ ե տ ք է ն ախապե ս ո թ ո շ ի՝ տվյ ալ դ աս ի հ ամ ար ո՞ թ ն է
լ ալ ա գ ու լ ն հ ն ար ա վ ո թ ա վ ար տը , լ ու ծ ու մ ն ե թ ի ի ն չ պ ի ս ի
մ ա կ ար դ ա կ ն է ց ա ն կ ալ ի , յ ու թ ա ց մ ա ն ի ն չ պ ի ս ի խ ո թ ու թ յ ու ն է

հնարավոր, ինչպիսի հասկացություններ այս դասից պետք է
յուրացնել աշակերտը: Ինչեզրակացություն պետք է հանգի դասի
արդյունքում, ինչ ինդիկներ պետք է լուծվեն

Քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ համոզվել ենք, որ մեր փոքրահասակ սաներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ: Արդունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է.

Զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են,

Ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին,

Հարգանքով լսեն բազմազան կարծիքներ,

Պատրաստ լինեն և ձևակերպել, և հարկ եղած դեպքում նաև կասեցնել սեփական դատողությունները:

Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների ուսուցումը չի կարող երբեք իր մեջ ընդգրկել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք երեխան պետք է ստանա այդ ուսումնական առարկայից:

Ծրագրում տրվածը միայն այն հիմնականն է, որ անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, իսկ մնացածը երեխաներն իրենք պետք է ինքնուրույն կերպով ստանան շրջապատից ու գրքերից:

Այսինքն, յուրաքանչյուր ուսուցչի գերինդիքն է սովորել սովորեցնելը:

Ասվածի ապացույցն է գրական ունկնդրման դասաժամերի կազմակերպումը: Առաջին դասարանի երկրորդ կիսամյակում աշակերտներն աստիճանաբար սովորում են առանց ուրիշի օգնության կարողալ անձանթ գիրքը, գտնել վերնագիրը, հեղինակի անունը, դիտել նկարազարդումները և դրանց հիման վրա որոշել գրքի թեման:

Գրական ունկնդրման դասաժամը կազմակերպելիս պետք է նկատառել սովորողների պատրաստվածության մակարդակը, ծնողների սոցիալական վիճակը, դասարանի և դպրոցի գրադարանի ֆոնդը, երեխաների հետաքրքրությունների շրջանակը: Այս ամենը հաշվի առնելով՝ ընթերցանության ստեղծագործությունների ընտրությունը պետք է կատարվի հետևյալ պայմանների առկայությամբ.

1. Բնագիրը պետք է լինի ծավալով փոքր՝ պարզ, մատչելի, թեման հոգեհարազատ, գաղափարը՝ հասկանալի:
2. Ինքնուրույն ընթերցանության համար ընտրված գրքերը գեղարվեստական ձևավորմամբ պետք է լինեն այնպիսին, որ երեխաները հետաքրքրվեն նկարազարդումներով, հրճվեն հերոսների նկարներով:

Ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս պետք է կրտսեր դպրոցականների մեջ սերմանել ընթերցասիրություն, զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, եզրահանգումներ, ընդհանրացումներ անելու կարողություններ:

Նպաստել նրանց մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը:

Հաճախ ենք հանդիպում աշակերտների, որոնք նոր են կարդացել ու շատ քիչ բան են հասկացել: Վատ ընկալունակությունը բացատրվում է պարզ պատճառով, պարզապես ուշադիր չեն կարդում: Նրանք չգիտեն ինչպես կարդան, որ կենտրոնանան հիմնական մտքերի վրա: Ուսուցիչներս տիրապետելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներին ու հնարներին՝ կարող ենք օգնել աշակերտներին՝ խորհել կարդացածի մասին:

Դեռևս ամառային արձակուրդներին աշակերտներին առաջարկում ենք ընթերցել իրենց նախընտրած ստեղծագործությունները: Նախօրոք պայմանավորվում ենք ծնողների հետ, որ նրանք իրենց երեխաներին օգնեն ընտրել այնպիսի մանկական գրականություն, որն աչքի ընկնի պարզությամբ, մատչելիությամբ, խոր գեղարվեստականությամբ և կերպարների ու նկարագրված դեպքերի վառ գունավորմամբ: Նման ստեղծագործությունները երեխաների մեջ անհրաժեշտ հույզեր ու ապրումներ կառաջացնեն: Նրանք կզգան ու հոգեպես կվերապրեն այն ամենը, ինչ նկարագրված է գրքում: Երբ աշակերտներին թույլ է տրվում ընտրել ինչ կարդալ, նրանք սկսում են կարդացածի հանդեպ սեփականության զգացում ունենալ: Դա առաջին վճռորոշ այն քայլն է, որն ընթերցողին դարձնում է ներգրավված:

Մեպտեմբերին, ինքնուրույն ընթերցանությանը հատկացված դասաժամին յուրաքանչյուրը ներկայացնում է իր ընթերցած գիրքը գովազդի տեսքով՝ առանց բովանդակությունը պատմելու: Յուրաքանչյուր աշակերտ ձգտում է առավելագույնս ձևով ներկայացնել գովազդը, որպեսզի իր ընկերների ընտրությունը կանգ առնի իր նախընտրած գլքի վրա, և բոլորն ընթերցեն այն: Ապա ուղղում ենք հարցեր.

- ❖ Ինչու՞ ես ընտրել այդ գիրքը:
- ❖ Ինչպե՞ս է այն կարդացվում:
- ❖ Դու ծանոթ ես այդ հեղինակի որևէ այլ ստեղծագործության:
- ❖ Անձանոթ բառեր կայի՞ն:
- ❖ Ինչպե՞ս իմացար դրանց բացատրությունը:

Այնուհետև քվեարկում ենք և ըստ քվեարկության արդյունքների ընտրում որևէ մեկի ընթերցած գիրքը ու որոշում այն ընթերցել: Միասին սահմանում ենք այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է աշակերտներին գիրքն ընթերցելու համար:

Հաշվի է առնվում տվյալ գիրքն ընթերցած աշակերտի կարծիքը: Նրանք պետք է իմանան ընթերցանությանը հատկացվող ժամանակը, որպեսզի կարողանան պլաններ կազմել: Ընթերցելուց հետո պետք է մասնակցեն քննարկմանը: Նման հանձնարարությունն օգնում է աշակերտներին ընթերցման ժամանակ ուշադրություն դարձնել այնպիսի մանրամասների վրա, որ նախկինում չէին նկատել:

Մինչ կարդալ սկսելը մտազրոհի միջոցով կազմում ենք բնագրի իմաստի կանխավարկածը: Եթե ընթերցողը նախօրոք գիտի, որ ինքը պատմվածք է կարդալու, ապա մինչ բուն ընթերցանությունն սկսելը փորձում է վերնագիրն ու նկարները օգտագործել որպես բանալի՝ պատմվածքի բովանդակությունը կռահելու համար: Այս դեպքում նա կանգնած է լավ ընկալման շեմին: Տրված ժամանակը լրանալուց հետո սկսվում է քննարկման դասաժամը: Աշակերտները բաժանվում են 4-5 խմբերի: Նրանց ուղղվում են հարցեր, որոնց պատասխանները քննարկվելու են:

- ❖ Ի՞նչը ձեզ դուր եկավ այս գրքում:
- ❖ Ի՞նչը դուր չեկավ:

- ❖ Ինչպե՞ս էր գիրքն սկսվում:
- ❖ Ինչպե՞ս ավարտվեց:
- ❖ Արդյո՞ք ընդունելի ավարտ էր:
- ❖ Ի՞նչն էր կարևոր:
- ❖ Գիրքն ընթերցելուց հետո ի՞նչ մտքեր են ծագել ձեր գլխում:
- ❖ Ի՞նչն այլ կերպ կանեիք, եթե կերպարներից մեկը լինեիք:
- ❖ Ի՞նչ սովորեցիք հերոսներից:
- ❖ Ո՞ր կերպարն ամենաշատը ձեզ դուր եկավ:
- ❖ Ի՞նչ հասկացաք՝ կարդալով այս գիրքը:
- ❖ Կարո՞ղ էք այլ ավարտ հորինել:
- ❖ Ինչպիսի՞ն էր տրամադրությունը:
- ❖ Ի՞նչ կարևոր իրադրություն էք վերհիշել:
- ❖ Ո՞րն էր ձեր սիրելի հատվածը:
- ❖ Այս գիրքը ձեզ որևէ դեպք կամ որևէ բան հիշեցնու՞մ է:
- ❖ Ձեր կարծիքով ինչու՞ է հեղինակը գրել այս գիրքը:

Այնուհետև խմբերն իրենց ընտրությամբ թղթապանակ են պատրաստում տվյալ գրքի վերաբերյալ: Խմբի անդամների միջև կատարում ենք աշխատանքի բաժանում ընտրելով խորագրեր:

- ❖ Պատմվածքի քարտեզը
- ❖ Հեղինակի մասին
- ❖ Պատմվածքի մանրակերտը
- ❖ Մեր տպավորությունը
- ❖ Գլխավոր հերոսի բնութագիրը
- ❖ Նամակ հերոսին
- ❖ Հերոսի կողմից նամակ
- ❖ Պատմվածքի տարբեր հատվածների նկարագրումը

Խոսնակները ներկայացնում են իրենց խմբերի աշխատանքները: դրանք փակցվում են միջանցքում, որպեսզի մյուս դասարանների աշակերտները հետաքրքրվեն այդ պատմվածքով և ցանկանան ընթերցել այն:

Երբ նույն պատմվածքն ընթերցում են բոլորը և քննարկում, ապա այդպիսի ընթերցանությունը կմիավորի երեխաներին և նրանց մեջ կզարգանա համագործակցային և հաղորդակցական հմտություններ:

Ինքնուրույն ընթերցանության նման ձևով կազմակերպումը նպաստավոր պայմաններ է ստեղծում, որպեսզի աշակերտների մեջ արթնանա ընթերցանության հանդեպ սեր, նրանք գնահատեն իրենց ընթերցածը, կարողանան ընթերցանության միջոցով ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ և վերահսկեն իրենց ընթերցածը:

Աշակերտներին ընթերցասեր դարձնելու համար անհրաժեշտ է լուրջ ակնկալիքներ ունենալ յուրաքանչյուրից: Նպաստել երեխաների քննադատական մտածողության զարգացմանը,

նրա տարիքին համապատասխան նշանակում է ուրախ, հրապուրիչ դարձնել և հույզերով հագեցնել նրա մանկությունը:

Եզրակացություն

Այսպիսով, եկանք այն եզրակացության, որ քննադատական մտածողության համակարգը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններ ստեղծել դասարանում: Սրա շնորհիվ աշակերտները

- ❖ Կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք:
- ❖ Կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսավորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի:
- ❖ Կդառնան հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող, որով ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելը վերափոխվում է սուբյեկտ-սուբյեկտ մոդելի: Դասարանում գլխավոր դերակատարը կդառնա աշակերտը/ աշակերտակենտրոն ուսուցում/
- ❖ Աշակերտները կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ:
- ❖ Կկարողանան նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների համակարգում:
- ❖ Կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն:

Քննադատական մտածողության համակարգը ուսուցման և ուսումնառության երեք փուլերից բաղկացած մի մոդել է: Մոդելը նկարագրում է ճանաչողական մի գործընթաց, ուր աշակերտները պետք է ներգրավվեն մինչև նյութը սովորելը / խթանում /, նյութը սովորելու ընթացքում / իմաստավորում / և նյութը սովորելուց հետո / կշռադատում /

❖ ԽԻԿ համակարգ

ԽԻԿ համակարգը որոշ չափով մեզ հիշեցնում է ծանոթ ավանդական դասի կառուցվածքը՝ նախապատրաստական փուլ / խթանում /, նոր դասի հաղորդման փուլ / իմաստավորում / և ամփոփման փուլ / կշռադատում /:

Օգտագործված գրականության ցանկ

Գիտամեթոդական հանդես նախաշավիղ 2. 2001, 2. 2006, 5-6. 2004

1. Խաչատրյան Ս. Գ. , Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, Գ. 2006.
2. ՀՀ ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն: Կրթության ազգային ինստիտուտ: Ուսուցիչների հինգօրյա վերապատրաստումների պլան և նյութեր, 2007:
3. Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան-2002

